ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ ԿԱԹՆԱՌԱՏԻ
ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Կաթնառատ համայնք
Լոռու մարզ,գ.Կաթնառատ,Հեռ. 093.48.49.60, 098.83.70.10

N-27

<<13> փետրվարի 2017թ.

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ

ՄԱՐԶՊԵՏ ՊԱՐՈՆ՝ Ա. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Ա.Նալբանդյան կից Ձեզ եմ ներկայացնում համայնքի ավագանու N 04-Ն որոշումը:

Առդիր՝2 թերթ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈՒԲԻԿ ՂԱԶԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱԹՆԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Կաթնառատ համայնք, գ.Կաթնառատ, 093,48,49,60

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<< 08 >>փետրվարի 2017 թվականի N 4 – Ն

ԿԱԹՆԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԵՎ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>>Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, 82-րդ հոդվածի 7-րդ մասով,<< Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 8-րդ մասով, << Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի 2-րդ մասով՝

Կաթնառատ համայնքի ավագանին

Որոշում է՝

1. Հաստատել Կաթնառատ համայնքում 2016 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը՝համաձայն N 1 հավելվածի:
2. Հաստատել 2016 թվականի Կաթնառատ համայնքի զարգացման ծրագրի իրականացման վերաբերյալ հաշվետվությունը՝համաձայն N 2 հավելվածի:
3.Սույն որոշումը օրենքով սահմանված կարգով ներկայացնել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն պետական իրավական փորձաքննություն անցկացնելու համար:
4. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ /5/ Դեմ /-/ Ձեռնպահ/-/

ԱլեքսանյանԱիդա
ԱսմարյանՍարգիս
ԳալստյանՍվետլանա
ՋանոյանՀրաչիկ
Ղազարյան Սարգիս

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱ՝ ՌՈՒԲԻԿ ՂԱԶԱՐՅԱՆ

Հավելված 2

Հաշվետվություն
Համայնքի 2016 թվականի Կաթնառատ համայնքի զարգացման ծրագրի իրականացման վերաբերյալ

Կաթնառատ համայնքի սոցիալ տնտեսական զարգացման ծրագիրը նախատեսված է 2013-2016 թթ համար:
Զարգացման ծրագրում ընդգրկված են համայնքի երեք հիմնախնդիրները՝
1-ին – դպրոցի շենքի շինարարություն:
2016 թվականի ընթացքում ծրագրի իրականացման նպատակով համագործակցություն է եղել Սոց-ծրագրերի հիմնադրամի հետ - ներկայացրել ենք համայնքի տվյալները:
Գումար չլինելու պատճառով աշխատանքները դանդաղում են :

Զարգացման ծրագրով նախատեսված <<Մանկապարտեզի շենքի վերանորոգման >> ծրագրի համար 2016 թվականի ժամանակահատվածում ոչ մի աշխատանքներ չեն իրականացվել գումարներ չլինելու պատճառով:

<< Ներհամայնքային ճանապարհների բարեկարգում >> ծրագրով նախատեսված աշխատանքները իրականացվել են կեսով չափով : Կատարվել է ներհամայնքային ճանապարհների փոսալցում , սեփական միջոցներով: